

սրբազան առաջնորդի, հմուտ, հասկացողութեան տէր մարդկանցից, ուրեմն այդպիսի պատգամաւորները երբեք խաղալիք չէին կարող դառնալ ընտրելով մեզ կրկին հոգաբարձու:

Երկրորդ, հոգաբարձուները մի տարի ինքնակառավարութեամբ չեն ծառայած, ինչպէս ազգասէր Առաքելեանցն է գրում Հոգաբարձութիւնը քանիցս անգամ պաշտօնապէս յայտնած է կոնսիստորիային 1887 ամի օգոստոս 27-ին ընդ համարաւ 197, և վիճակաւոր առաջնորդին 1888 ամի ապրիլի 28, համարաւ 91 նոր հոգաբարձական ընտրութիւն անելու համար, բայց զբաղման հոգաբարձութիւնը տուած է իր հրաժարականը սրբազան առաջնորդին, բայց սրբազանը երբեք չէ ընդունած, այլ խնդրած է մեզ քանիցս թէ առանձնապէս և թէ բազմաթիւ ժողովրդի ներկայութեամբ մնալ դռնէ մինչև մայիս ամիսը: Եթէ սուտ է մեր գրածը, թող հերքեն կոնսիստորիան և սրբազան հայրը: Իսկ ինչ վերաբերում է այն ղեղձումներին, որոնք արժանի են պիտուրբական վերահասութեան, ցաւում ենք, որ չեն պարզւած յօդուածի մէջ, և այդտեղ բաւերի է դու տուած և ոչ միտքին: Արդեօք ուղում է բան հասկացնել, թէ մուրթ և վերացական խօսքերով կասկածներ յարուցանել ժողովրդի մէջ: Յաւայի է, որ ազանեւրին չը հաւանող ինտելիգենտը խարդախ և մուրեցեցեցի միջոցներ է դիմում:

Երրորդ, հոգաբարձուները ոչ թէ միայն ամեն տարի յոճակարին, ինչպէս օրինակ 1885, 1886, և 1887 թվականներին կանոնաւորապէս հաշիւները ներկայացրած են կոնսիստորիային և ս. սինօդին, այլ ցանկանալով, որ իրանց հաշիւը տեղեկութիւն ունենայ նաև ժողովուրդը, դիմել են և առանձին տպագրութեան, որոնցից և զըրկած են 1885 և 1886 թվականներին «Մշակ», «Նոր-Վար» և «Արձագանք» լրագրներին: Եթէ «Ճշմարիտ» չէ մեր գրածը, ահա խնդրում ենք հրապարակւած թող հերքեն ս. սինօդը, կոնսիստորիան և թէ ընդ որ լրագրները, որոնց մէջ տպագրւած են մեր հաշիւները, իսկ եթէ ոչ յանձնում հնդ ամօթմանը զբաղարկելներին հասարակաց դատաստանին:

Չորրորդ, հոգաբարձու գանձապահը երբեք հետք չէ տարած 50 հազար ռուբլի գումարը Նուխի գանձը, որ բաղկացած էր 9000 ռուբլիայի գրքից և 1000 ռուբլի բանկաւորութիւնից, Նուխի տանելու հարկաւորութիւն չէ կար, ինչպէս կարծում է պ. Առաքելեանցը և ոչ կոնսիստորիային յանձնելու պարտաւորութիւն. կանոնադրութեան 15 և 16-րդ յօդուածը գրում է այսպէս՝ «Վարդի կառավարութեան խորհուրդը յանձնում է հոգաբարձուներից մէկին զարդի գանձը, և պահել զարդի ելքի և մուտքի ժապաւինեալ մատենը, որն որ հոգաբարձութեան խորհուրդը ստանում է Եմիլիանայ սինօդից: Եթէ գանձապետ հոգաբարձուին հարկաւոր լինի Շուշի քաղաքից երկար ժամանակով բացակայ լինել, նա պէտք է զարդի կառավարութեան խորհրդի կարգադրութիւնով իր պաշտօնը, գանձը և ժապաւինեալ մատենները յանձնէ ճշդութեամբ ներկայ գտնվող հոգաբարձուներից մէկին կամ փոխանորդին»: Բայց գանձապահը քանիցս անգամ հոգաբարձական ժողով կայացնելով յայտնած է, որ իր կարճ միջոցով բացա-

կայութեան պատճառով երբեք չէ ցանկանում յիշեալ գումարը իր տանը պահելու, հոգաբարձուներից և ոչ մէկը նոյնպէս յանձն չառաւ ստանալ գանձը, երկուսը կրելով տանը պահելուց, ուստի հոգաբարձական վճռի համաձայն պաշտօնապէս կրելով յանձնված է ապահով տեղ երկաթեայ մուրձի մէջ պահելու համար մինչև գանձապահի վերադարձը:

Հինգերորդ, ինչ որ վերաբերում է Ստ. Խաչբաշեանցին, այդ մասին արդէն բացատրութիւն տուած է 1886 թվին «Մշակի» համարներից մէկում նոյն իսկ Հ. Առաքելեանցի խմբագրութեամբ, երբ նա այժմեան հոգաբարձուաց զործոնութեան ջերմ համակողմնակից մինն էր: Ելի կրկնվում է, որ հոգաբարձութեան ձեռքում կալուածները վերաբերութեամբ թղթի կտոր անգամ չը կայ: Կոնսիստորիան ունի իր առանձին հաւատարմատարը և վանքի հետ Աղալարովի ունեցած վճար պաշտպանում է ոչ թէ Ս. Խաչբաշեան, այլ Վարդիսի-Չարանէլի:

Վեցերորդ, Օրբելեանցին հոգաբարձու ընտրելով պատգամաւորները երբեք չեն սխալված, աչքի առաջ ունենալով նրա երկարամեայ հոգաբարձութեան ատենական պաշտօնի մէջ ունեցած ծառայութիւնը և հմտութիւնը հոգաբարձական գործերում, մանաւանդ ներկայ վիճելի կալուածները վերաբերութեամբ:

Եօթերորդ, Առաքելեանցի ի վերջոյ ցանկանում է, որ խիստ քննութիւն բացվէր հոգևոր իշխանութեան կողմից և այնպէս վճիռ դրվէր և այդ (որը դժբաղդաբար չէ լինում) հոգաբարձութիւն ամենայն սիրով կընդունէր այդ քննիչներին, այն ժամանակ միայն յայտնի կը լինէր թէ մենք իրաւունք ունենք մեր գործերով պարծենալու, թէ արդէն սեպցած երեսների վրա կրկին սև կը ըսվէր և այդպիսով կը քաշտային իսպառապարկից ջուր պղտորող ինքնակույ ազգասէրներ:

Եւ ութերորդ, միւս, այսպէս ասած, յանկարծակի նոր հոգաբարձութեան ընտրութիւնը, առաջնորդի ճարտասան ձառը, պատգամաւորաց արդարացի պատասխանները, մի չաքը աննշան անձինքների անուանը գրել և սենեակի պատից կցցնելը, Հ. Առաքելեանցը պատգամաւոր չընտրված, պատգամաւորների սենեակ ծածկուած մտնելը, գործի մէջ խառնվելը և պատգամաւորների նրա վճռուել ցանկանալը, մենք բոլորովին լուրջութեամբ ենք տալիս, ըստ որում մենք հոգաբարձուներս ներկայ չենք եղած ընտրութեան ժամանակը բացակայ լինելով քաղաքից և թէ ամենայն անցը մանրամասնօրէն շատ քաջ յայտնի են ամբողջ հասարակութեանը:

Վերջապէս ընկերացող հասարակութիւնը վերոյիշեալ փաստերը կարգաւոր կուզէ իմանալ եթէ Առաքելեանցի բոլոր գրութիւնները սուտ են, ապա ինչն է ստիպում նրան այսպիսի ստեր շարադրելու: Մենք կը պատասխանենք. — նրա անձնական չափերը:

Այս հոգաբարձութիւնը լաւ և գովելի կը լինէր այն ժամանակ, երբ նրա ցանկալի տեսչական կամ ուսուցչական պաշտօնը կը յանձնէր առանց ուշադրութիւն դարձնելու նրա աթոնաւորութեան վրա: Շատ լաւ կը լինէր, եթէ քրոջ վարժուած պաշտօնից չը հանէր իրանից անկախ նում են իրանց գիւղերը բոլոր անասուններով և պատրաստած իւր ու պանիրով միասին: Վաճառականները կամ չարչիկները, ասել հարկ չէ, որ այդ օրին են սպասում, սկսում են շուտով քաշել իւղերը, որը արտահանվում է նրանց միջոցով տարէն մօտ 2—3 հազար պուդ և գլխաւորապէս տարվում է Կ. Պոլսի խմորիչի մասի իւղը, որ պատրաստվում է Կարճիս լեռների վրա, շատ աղին է լինում և առհասարակ Շաւիշ-Թի իւղից յարգի են բռնում: Նմանապէս և Խմորիչի տաշովի կողմ պանիրը, թէ շատ սաւառ նրա հետ ծանօթ եղողներին մէջ, ինչպէս և Արդանուշում ճանձտի պանիրը:

Բայց չափն չիցանալից, Շաւիշ-Թի սարերի իրեն ամառվայ ժողովուրդը չը մոռանանք և յիշել այստեղ լազերին, քիւրդներին և համէնցի հայ-մասնէ-դականներին, որոնք իրանց բազմաթիւ հօտերը և նախիրը խառնում են գաւառն սկզբներում Բաթումի կողմից և կամաց կամաց տալութեան հետ ի միասին աստիճանաբար ելնում են դէպի վեր սարերը և ամառը անց են կացնում այնտեղ, և ապա նորից, քանի ցուրդը ստիպում է, կամաց կամաց իջնում և վերադառնում են ի-

պատճառներով, զերազանց կը լինէր, եթէ հոգևոր տեսչութեան տպարանի գործերը թողնէին նրա ձեռքում, որի վնասը մինչև այժմ ևս առհասարակ է հոգաբարձութիւնը: Այս մասին կարելի է հարցնել մանրամասն տեղեկութիւն և թիֆլիսի թղթաւորաւոր պ. Իսկուրեանից:

Մեզ, ի միջի այլոց մնում է ցաւել, որ այդպիսի մարդիկ իրանց ստացող յօդուածները հիւղելով են տալիս «Մշակ» լրագրի պէս մի արժանաւոր թերթի մէջ և այդպիսով մոլորեցնում, թէ գործին անտեղեկ մամուլին և թէ պարզամիտ ժողովրդին:

Իսկ № 66 համարում տպված նորէն Առաքելեանցի յօդուածի պատասխանը, այլ անգամ Հոգաբարձուց Շուշու հոգևոր դպրանոցի Ն. Աթաբեկեանց, Բ. Խաչբաշեանց, Հ. Շիւսեանց:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Նրէի, յուլիսի 22-ին, Նորին Կայսերական Մեծութիւն Թագուհու Կայսրուհու Մարիա Ֆեօդօրովնայի անուանակոթութեան օրը, Վանքի և Սիօնի մայր եկեղեցիներում մաղթանքներ կատարվեցան: Փաղաքը զարդարված էր դրօշակներով իսկ երեկոյան լուսաւորված էր:

Ինչպէս լսում ենք, թիֆլիսի ժողովարանը այս տարի սովորական ժամանակից առաջ կանցնի ամառվայ բնակարանից իր ձմեռվայ բնակարանը, որովհետև ժողովարանի այդիւմ մի քանի փոփոխութիւններ կը լինեն, յարմարեցնելու նրան մօտիկ ապագայում թիֆլիսում կատարվող հանդէսների ժամանակ տրվելի մի ճաշիկներին: Համար ժողովարանի և նրան կից Թայիթեանի այդիւմ մէջ եղած պատնէշը վերցվում է: Ներկայ բօսնդօն փոփոխվում է և նրան կից շինվում են մի քանի ուրիշ պավիլիոններ: Շինութիւնների վրա պէտք է վերահսկէ ճարտարապետ պ. Սիմօնօն:

ՆՈՒՍԻՈՒՑ մեզ գրում են յուլիսի 16-ից հետեւեալը: «Մի երկու օր առաջ սրտեղ անտանելի շոգ էր անում, իսկ այժմ անձրև է գալիս և եղաւ նախը գալի կերպով մեղմացաւ: Կովկասեան լեռնաշղթայի գագաթների ձիւնը բաւական ցած իջաւ, որով չորացած գետերը կրկին զուարթացաւ և ջրին կարօտ այգիներից շատերը, մանաւանդ Արշէլում, կրկին ջուր ստացան: Սակայն եթէ անձրևները այսպէս շարունակվեն, գիւղացիները զգալի վնաս կը կրեն, որովհետև ցորենն ու գարին գրեթէ ամեն տեղ դեռ կալումն են և դեռ ծեծված չեն»:

ՆՈՒՍԻՈՒ չըջակայ գիւղերում, ինչպէս մեզ գրում են, օր չէ անցնում, որ սպանութիւններ և գողութիւններ չը լինեն: Շրջականերում պտուտ են Սիբիրից փախած աւազակներ, որոնցից մի չորս հոգի այս օրերս ձերբակալվեցան: Այս օրերս, գիւղերի շրջականերում աւազակների ձեռքով սպանվեցան երկու հայ գիւղացիներ: Իւրաքանչիւր գիւղի ցորենի դէպքը այրելը, թղթակցի ասելով, սովորական բան է դարձել Նուխու կողմերում:

Մեզ խնդրում են տպել հետեւեալը. «Հայոց

տեղական դերասանական խումբը, թիֆլիսում, կիրակի, յուլիսի 24-ին, մի ներկայացում պիտի տայ «Եւթապա» այդիւմ յօդուած Արդուիեան թղթերից զրկված լինելով, մահճի գերի է Շաւի գիւղ անուանված թաղի մի ամենավերջին տան մէջ, իսկ իր չորս մերկանգամ փոքրիկները, կի-նը և ծեր մայրը աշխատող ձեռքերից զուրկ, ինչպէս ասում են, ցամաք հացի կարօտ տառապում են: Թող մեր հասարակութիւնը բարոյական պարտք համարէ իր համար, դռնէ տոմսակներ դնելով օգնութեան ձեռք կարկառել այդ դժբաղդ բնականներին, որը շուտափոյթ օգնութեան է կարօտ: Ներկայացմանը կը խաղացվեն «Նկարիչներ», Պիպի տիճուրը» և «Վայ իմ կորած յիսուն տակի» պիեսները: Այդիւմ կը նուազէ և զինուորական երաժշտական խումբը»:

«Новое Время» լրագրի մէջ կարդում ենք հետեւեալը. «Այս օրերս Պետերբուրգ հասաւ զինուորական ինժեներ Կապիտան Վ. Պ. Գերասիմով, որին կովկասեան վարչութիւնը ուղարկել է անցնալ պատերազմներում մեր կովկասեան զօրքերի վերցրած պարսկական դրօշակները ստանալու համար, որոնք պահուած են Կազանի մայր-եկեղեցում: Թէ այդ և թէ Մօսկվայի Չուգօյի վանքում գտնված դրօշակները կը դետեղվեն ներկայումս թիֆլիսում կառուցվող «Փառքի Տաճարում» ի յիշատակ կովկասեան զօրքի յաղթութեան: «Փառքի Տաճար» մի այնպիսի թանգարան պէտք է լինի, որ պէտք է ժողովի այն բոլորը, ինչ որ միայն կարող է յիշեցնել Կովկասի նուաճումն: Համարեա «Փառքի Տաճարի» հանդէպ եկող աշխարհը հիմք կը դրվի մի հոյակապ մայր եկեղեցու, ճարտարապետ Գրիմի նախագծով: Մայր եկեղեցին կառուցվում է գլխաւորապէս կովկասեան չըջանի զօրքերի ժողոված միջոցներով»:

Նոյն լրագրում կարդում ենք. «Այսօր, յուլիսի 13-ին, Գարակոբ-Սիւրում լուր տարածվեցաւ հետեւեալ բնուանական դրամայի մասին, որ տեղի է ունեցել տեղական ամբարանցներից մէկում: Կախվել է հասակն առած, պատուաւոր ընտանիքի մի հայրը: Պատմում են, որ անձնասպանութեան պատճառով հետեւեալ ճանապարհէն է եղել: Մի երիտասարդ օֆիցեր առաջարկութիւն է արել նրա աղջկան և համաձայնութիւն է ստացել: Երիտասարդներին նշանել են: Բայց հարմարացող այրի հայրը պատահմամբ սիրահարվում է իր փեսացուի քրոջ վրա: Հասկանալի է, որ ուղղափառ եկեղեցու կանոններով չէր կարող անելը պատկիւ իր փեսայի քրոջ հետ: Պէտք է, որ նրանցից մէկը գիշողութիւն անէր: Տեսնելով որ իր աղջիկը շատ սիրահարված է իր փեսացուի վրա, և չը կամենալով արգելք լինել նրա բաղդին, հայրը վճռեց գիշանել և աւելի լաւ համարեց կախվել, քան թէ ապրել, առանց կարողա-նալու պատկիւ իր սիրելի աւարկայի հետ»:

Այսօր, ժամի 12-ին, Շաղիսովի քարվանսարայի դիմաց, Սաղի կողմից, ձիու վրա նստած մի երիտասարդ մտու Վուրը ձիուն լողացնելու համար: Բայց երիտասարդը յանկարծ ձիուց ընկաւ ջուրը: Այն մալականներից մէկը, որոնք մէկ ամիս է

համէնցիների գիւղերի մի մասը գտնվում է տաճ-կի սահմանում Բաթումի մօտ, որտեղից անց են կենում ամառը և այս կողմերի հիւր են գալիս սարերի վրա ամառելու, իսկ միապէս մասը Բաթումի նահանգում է, որ անցած են ուսաց հպատակութեան ներքե վերջին ուսութեանը պատերազմի ժամանակ Տաճկաստանի մէջ գտնված համէնցի հայ-մասնիկականների գիւղերն են, որոնք իրանցից ստուգած են խօսիւթայում կամ փոքր Համէնցում Զալինա 80 տուն, Խինկոյա 80 տուն, Զուրիկի 30 տուն, Արդաւա 60 տուն, Զալուշուկ 30 տուն, Կարջի 40 տուն, Զինդիդ 40 տուն: Իսկ ուսաց հպատակութեան ներքե գտնվածները հետեւեալներն են. Կարաշալուկ 15 տուն, Ավեհա 12 տուն, Մալիւկա 150 տուն: Բոլոր համէնցի հայ-մասնիկականները իրանք իրանց ընդամենը 600 տուն են հաշուած:

Սաթլէ. Զարուբիւն Գաթիէնեան

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.
ՅՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԻԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԵ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵՅԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ.
Հինգշաբթի, օգոստոսի 4-ին, ԱՐՄԵՆԻԱ (ARMENIE) շոգենաւը, նաւապետ ԳԱՐԻԳ (GARRIGUS) զուրա կը գնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Օրդու, Սամսոն, Կ. Պոլիս և Մարսէյլ: Տեղեկութիւններ ժամին պէտք է դիմել ընկերութեան գործակալներին. Բաթումում լէվոզլուի տան, Նաբեքէճեայա, և Թիֆլիսում Նախկին Արծրունի գալլերէում, № 103.

ԱՌԵՆՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

(Թիֆլիս, Լաբորատորիայա փողոց, № 11)

Յանկացողը, ունենալ իրանց առևտրական գործերի համար, անցնալ յունիս ամսում ուսման ընթացքը աւարտած ԱՇԱԿԵՐՏՆԵՐ ԵՒ ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻՆԵՐ, թող բարեհաճեն դիմել կուրսերի հիմնողին, Ս. Մանուէլեանցին: Աւարտողները առաջել են մասնագիտական առևտրական կրթութիւն, Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձուի հաստատմամբ ծրագրի համեմատ, և ունեն օրինաւոր ատեստատներ: Ընդունելութիւնները սկսվելու են սեպտեմբերի 15-ից: Կուրսերի ծրագիրը և կանոնները կարելի է տանալ ձրիապէս Գ. Մանուէլեանցիին: Ծովանոցների բանկային գրասենեակում և կուրսերի հիմնողի բնակարանում: Օտարաբարադարացիք դիմում են Тифлисе, учредителю курсовъ С. П. Мануэляну.

5—5 (Ե. Շ.)

- 1) Հարկաւոր է մի ՈՒՍՈՒՑՈՒՀԻ պահանջեալ վկայականով, որը կարողանայ դաս տալ ՈՒՍՈՒՑ ԼԵՁՈՒ և ԹՈՒՄԱՐԱՆՈՒԹԻՒՆ:
- 2) Հարկաւոր է մի ՈՒՍՈՒՑԻՉ, պահանջեալ վկայականով, որը կարողանայ դաս տալ հայոց լեզուով աւանդող բոլոր առարկաները: Մի հասցէն՝ Въ гор. Душетъ. Армянскому благодѣиному Теръ-Саркису Ерицяну.

Մի ՈՒՍՈՒՑԻՉ ցանկանում է հայոց լեզուի և թարգմանական դասեր տալ: Ներսիսեան դպրոցում աւարտած է և Մի ՏԱՐԻ արդէն վարել է ուսուցչի պաշտօնը: Ցանկանում է ուսուցչութիւն անել գաւառական քաղաքներում կամ ձեռնառու պայմաններում զիւղերում:

2—3

Խոնարհարար խնդրում եմ այն յարգելի անձանց, որոնք իմ հանդուրդեալ ամուսին ԱԼԷԿՍԱՆԴՐ ՄԱՐԱՏԵԱՆԻ

ԳԱՒԱՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ

Գրքի համար բաժանորդներ դանկու ներդրելու յանձն էին առել, բարեհաճեն ուղարկել ինձ բաժանորդագրութիւն, և դրամը, որպէս զի կարող լինեմ ապագայում բաժանորդաց ազգերը, որովհետեւ արդէն ապագայութիւնը աւարտում է: Հասցէն. Тифлисе. Шуманикъ Араратянъ, Өөминная ул. № 15 ձ. Давришева.

Այլի Շուանիկ Արարատեանց

2—5

Խոնարհարար խնդրում եմ այն յարգելի անձանց, որոնք բարեհաճել էին իմ թարգմանած՝

ԲՆԱԻՈՐՈՒԹԵԱՆ ԿՐՈՒԹԻՒՆ

Գրքի համար (Ներ. պրոֆէսոր Ա. Գաբրիէլի) բաժանորդներ դանկու ներդրելու յանձն առնել, բարեհաճեն ուղարկել բաժանորդագրութիւն և դրամը, որպէս զի կարողանամ ձեռի որդի ապագայի օրինակների քանակութիւնը և ժամանակին դեռեղ յարգելի բաժանորդաց ազգանունները: Գրքը լոյս կը տեսնի առաջիկայ սեպտեմբերին: Հասցէն՝ Тифлисе. Учителю Арм. Дух. Сем. Норсисянъ, Григорію Шахбудагянцу.

3—3

COMPAGNIE DES MESSAGERIES MARITIMES
PAQUEBOTS-POSTE FRANÇAIS.

ՅՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԻԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
(ՄԵՍԱՃԸՐԻ ՄԱՐՏԻՏԻՄ)

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵՅԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ
Ուրբաթ, 29-ին յուլիսի ԲԱԹՈՒՄԻՑ զուրա կը գնայ շոգենաւ ALPHÉE (Ալֆե) նաւապետ MERLIN (Մերլին) մանկով Կ. Պոլիս, Զմիռնիա և Սիրա:

Ազնիւաները ԲԱԹՈՒՄԻՄ ա. Գ. ԷՍԵՆՇԵՐ, իսկ ԹԻՖԼԻՍԻՄ ԳԵՈՐԳ ԷՆՁՈՒՐԵԱՆ ԷՆՁՈՒՐԵԱՆ:

2—3

Կ Ա Պ Ա Լ Ո Վ

տրվում են ԵՐԵՎԱՆԻՄ գտնվող «ԶԱՐԱՅԻ» և «ԶՈՒԼԱՅԻ» քարավանները: Պայմանների մասին հարցնել Թիֆլիսում Դժոքօգնայա փողոցի վրա գտնվող ՂԱԼԱՄԲԱՐՈՎԻ մագաղանում և Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԵԱՆ ապահովութեան ընկերութեան գործակալութեան մէջ:

8—15

Societa Generale italiana di Navigazione.

117. ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ՄԵՇ ՇՈԳԵՆԱԵՐ ՈՒՆՅՈՐ

ԻՏԱԼԻԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԱԻԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Կանոնաւոր երթևեկութիւն Բաթումի և Եւրօպայի, Աֆրիկայի, Ասիայի ու Ամերիկայի բոլոր գլխաւոր նաւահանգիստների մէջ: Շոգենաւերը Բաթումից զուրա են դալիս կանոնաւորապէս ամէն շաբաթ:

1500 տոննա ունեցող շոգենաւերը Բաթումից զուրա են դալիս ամէն երեքշաբթի օր դէպի Անտառիայի բոլոր գծերը և Կ. Պոլիս:

Բոլոր տեղեկութիւնները մասին (թէ անապարհորդների և թէ ապրանքների մասին) դիմել ընկերութեան գործակալ Ի. Է. ԶԵՐՈՒՑԻՆ ԹԻՖԼԻՍԻՄ—Գօլովինսկի պրոսպ. № 34 և ԲԱԹՈՒՄԻՄ—Իշխ. Գուրիէլի տանը:

10—40

ԵՐԿՈՒՆԱՒԱՐ ՓԱՍՏԱԲԱՆ

ՅԱԿՈՎԼԵ ՏԵՐ-ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

Այժմ բնակվում է Սոլովակի Ֆրէյլինսկայա փողոցում, Միլոզոլի տանը:

2—3

1000 ՐՈՒՔԼԻ
ՈՒԶՈՒՄ ԵՄ ՏՈԿՈՍՈՎ

Հասցէն Թոլնել «Մշակի» խմբագրատանը:

4—4

Պարապելով ԼԵՀԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐԻ ՊԱՏԱՌԻԹԻՒՆՈՎ, խնդրում եմ այդ հարցի հետ ծանօթ անձերին յայտնել ինձ թէ ինչ ձեռագիր կամ տպած աղբիւրներ և հետազոտութիւններ (ամբողջ գրքեր թէ փոքրիկ յօդուածներ պարբերական թերթերի մէջ, եւրօպական թէ ասիական լեզուներով, թարգմանութիւն թէ ինքնուրոյն) յայտնի են նրանց այդ հայ գաղթականների մասին: Հասցէն՝ Тифлисе, Сергиевская ул., իսկ սեպտեմբերին վարչապետի համալսարան:

Ս. Լիւիցեանց
7—10

ԲԵՆԵԴԻԿՏԵԱՆ ԳԵՐԱՊԱՏԻ ՀԱՅՐԵՐԻ
ԷԼԻԿՍԻՐԸ

ՍՈՒԼԻԱԿ (GIRONDE) ԱՐԲԱՑՈՒԹԻՒՆՑ

Այդ էլիկսիրը հարել է 1373 թւին վանահայր ՊԵՏՐՈՍ ԲՈՒՐՈՍ:



Այդ էլիկսիրի մի քանի կոթիւնների ամենօրեայ գործածութիւնը պահպանում է ատանները փանայուց, տալիս է նրանց սպիտակութիւն, ամրացնում է լինդերը և թարմացնում է բերանը:

Բացի էլիկսիրից ԲԵՆԵԴԻԿՏԵԱՆ հայրերը պատրաստում են դարձեալ ԱՍԱՄՆԱԳՕՇԻ և ՊԱՍՍԱ ատաններ սրբելու համար, որոնք նմանապէս կարելի է ձեռք բերել ամեն փոքր ի շատե՝ նշանաւոր զեղատներում, ինչպէս և զեղատան ապրանքների պահեստներում ու պարթիւնեական մագաղաններում:

ԳԼԻԱՌՈՐ ԱԳՆԵՏ SEGUIN, BORDEAUX, rue CROIX de SEGUEY, №106.

21—30 (Շ.)

ԵՐԿՈՒ ԱՍՈՒԹԻՆԵՐ ԵՐԿԱՐ Ժամանակ ՈՒՍՈՒՑՈՒԹԻՒՆ արած լինելով ՀԱՅՈՑ ԵՐԿԱՆ ԳՊՐՈՑՆԵՐՈՒՄ, ձեռնառու պայմաններով, ցանկանում են տեղ ունենալ նոյն դպրոցներում հայոց և ուսուցչի լեզուներից, այդ լեզուներով աւանդող միւս առարկաներից, թուարանութիւնից և ձեռագործութիւնից: Հասցէն. учителю Мамиконянцъ, оставить на заводъ Сиракана Теръ-Марти расянца въ Эривань.

2—3

Մի ՈՒՍՈՒՑԻՉ, որը ունի աւարտման վկայագիր և ատանատ քաղական ուսումնարանի, ցանկանում է դասեր ունենալ հայոց ուսումնարաններում: Դաւախաւում է ՈՒՍՈՒՑ ԼԵՁՈՒՑ, ՈՒՍՈՒՑ ԱՇՏԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆՑ և ՊԱՍՏՈՒԹԻՒՆՑ, նոյնպէս ԹԻՖԼԻՍԻՄԻՑ, բոլոր դասատուներում: Հարաւարական 24 դասի համար 600 ռ. ուսճիկ, իսկ ձեռու քաղաքներ գնալու համար նոյնպէս ձեռնագործականը: Հասցէի մասին կարելի է տեղեկանալ ВЪ БАКУ, въ ппхлѣ Калантарова, у учителя Гавриила Палиана.

2—3

Պարապելով մի քանի տարի ուսուցչութեան երկդասեան ծխական դպրոցներում և ունենալով ուսուցչական վկայական, ցանկանում եմ դասեր ունենալ ծխական դպրոցներից մինում՝ ուսուցչի լեզուով աւանդելի բոլոր առարկաներից, շաբաթական 24—30 դաս, 600 ռուբլի ուսճիկով, առանց ճանապարհածախսի:

Դիմել. БАКУ, Александру Тер-Степаносянцу.

2—5

Մի ԵՐԿԱՍԱՐԳԻ, որ աւարտել է իր ուսումը Ներսիսեան դպրոցում և ազատ ունիւղիք է եղել Գորպատի համալսարանում, կամենում է հայոց դպրոցներից մէկը մէջ ուսուցչի պաշտօն ունենալ: Կարող է դաս տալ զինուորական բոլոր առարկաների և լեզուները:

3—5

ՄԱՍՈՒԼԻ ՏԱԿԻՑ ԴՈՒՍ ԵԿԱՒ

Մալար վարդապետ Բաբխուրաբեանի

«ԲՆԱԳԱՑՈՒԹԻՒՆ ԳՆԱԳԱՑՈՒԹԵԱՆՑ»

Գինն է 40 կոպէկ

Երկրում է Թիֆլիսի կենտրոնական և «Սըրբիլի» դրամադատանոցներում: Բազում ա. Երբաղեանի, Շուշիում ա. Գուլիքեօսեանի և Պոլսում ա. Ն. Պէրպէրեանի մօտ:

Մի ՈՒՍՈՒՑԻՉ կամենում է տեղ ունենալ հայոց ուսումնարաններում: Համաձայն է ունենալ շաբաթական 24—27 դաս: Կարող է աւանդել բոլոր առարկաները, բացի բարձր դասատուներում ձայնադրութիւնը. պայմանների մասին դիմել «Մշակի» խմբագրութեանը:

2—3

ԱՐԿՈՒՆԻ ՆՈՐ ԲԱՅՈՒՆԻ ՏՂԱՑՈՑ ԵՒ ՕՐԴՈՂԱՑ ԵՐԿԱՆ ՄԻԿԱՍԵԱՆ ԳՊՐՈՑՆԵՐԻ համար հարկաւոր են մի ուսուցչի և մի ուսուցչուհի, ցանկալի էր, որ դրանք լինէին կամ եղբայր ու քույր կամ այր և կին, ուսուցչութեան իրաւունք ունեցողներ: Գանկացողները թող դիմեն Թիֆլիսի թեմակալ Առաքնադիւն, ներկայացնելով իրանց վկայականները:

2—2

Տեղափոխվելով Բագու կը խնդրեմ այն անձանց, որոնք ինձ հետ գործ ունեն կամ կը կամենան ունենալ, բարեհաճեն դիմել ինձ հետեալ հասցեով. Баку Агенту К-0 «Надежда» Сулханову. իսկ հեռագրով. «Степану Сулханову».

Ս. Սուլխանեանց

2—5

ԴՈՒՐԱՅԻ հայոց երկդասեան դպրոցի համար հարկաւոր է մի ուսուցչի ուսուցչի լեզուի և նոյն լեզուով աւանդելի առարկաների համար: Պայմանների մասին թիֆլիսաբնակները դիմեն «Սըրբիլի» խմբագրատանը՝ խաչատուր փանեանցին, իսկ Թիֆլիսից դուրս գտնվողները՝ Դուրայի դպրոցի հոգաբարձութեան, իրանց պայմաններով: Ցանկացողը պէտք է ունենայ ուսուցչութեան իրաւունք:

2—3